ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ի դեմս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Յու. Մկրտչյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ Պատվիրատու, մի կողմից, և ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ Էրեբունու պահպանության բաժինը, ի դեմս բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ա. Առուստամյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.04.2004թ. ,,ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների, շենքերի ու շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկը հաստատելու մասին,, թիվ 1008-Ն որոշման մեջ լրացում կատարելու ՀՀ կառավարության 30.06.2022թ. թիվ 964-Ն որոշման պահանջները, համաձայն որի ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ք. Երևան, Մոսկովյան 1 հասցեում գտնվող մասնաշենքի պահպանությունը իրականացվելու է ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ Էրեբունու պահպանության բաժնի կողմից, կնքեցին սույն վարչական ակտը հետևյալի մասին

1. Ակտի առարկան.

1.1 Կատարողը պարտավորվում է իրականացնել ք. Երևան, Մոսկովյան 1 հասցեում գտնվող ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի մասնաշենքի պահպանությունը:
1.2 ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի մասնաշենքի պահպանությունն իրականացնելու համար Կատարողը ձևավորում է ոստիկանության շուրջօրյա 1/մեկ/ պահակետ՝ 2/24 ժամյա , 1/մեկ/ պահակետ՝ 1/8 ժամյա և 12.79 /տասներկուս ու յոթանասունինը / միավոր ոստիկաններով :
1.2.1 ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի մասնաշենքի ծառայությունն իրականացվելու է ք. Երևան, Մոսկովյան 1 հասցեում գտնվող մասնաշենքի մուտքի պահակետում՝ 1/24 ժամյա և շենքի ներսում՝ 1/8 ժամյա պահակերտով:
1.3 Սույն ակտով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվում 2022թ. –ի սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը:

2. Կողմերի պարտավորությունները.

2.1 Պատվիրատուն պարտավոր է՝
2.1.1 ՀՀ Կառավարության համապատասխան նոր որոշման հիման վրա լուծել/ դադարեցնել/ սույն պայմանագիրը:
2.2 Կատարողը պարտավոր է՝
2.2.1 Ստանձնած պարտավորությունները կատարել միայն իր ուժերով:

3. Ծառայությունների վարձատրությունը

3.1 Ծառայությունների դիմաց ամսական վճարը կազմում է 2.515.819 /երկու միլիոն հինգ հարյուր տասնհինգ հազար ութ հարյուր տասնինը/ ՀՀ դրամ, որի վճարումը կիրականացվի ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեից՝ իր միջոցների հաշվին:

5. Կողմերի պատասխանատվությունը.

4.1 Սույն ակտով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը.

Սույն ակտով պարտավորությունները անբողջությամբ կամ մասնակի չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետրանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, հրդեհը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն ակտով պարտավորությունների կատարումը:

6. Եզրափակիչ դրույթներ.

6.1 Սույն ակտում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր ակտ կազմելու միջոցով, որը կհանդիսանա սույն ակտի անբաժանելի մասը:
6.2 Սույն ակտի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
6.3 Սույն ակտը կազմված է 2 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

<<Կ Ա Տ Ա Ր Ո Ղ>>

ՀՀՈ ՊՊԳՎ Էրեբունու պահպանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
Ա. Առուստամյան
30.08.22թ

Ք. Երևան Մ. Խորենացու 162-ա
ՀՎՀՀ 00404721
հ/հ 900023561013
Կենտրոնական գանձապետարան

<<Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ>>

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղար
Գ. Յու. Մկրտչյան
30.08.22թ

Ք. Երևան Մոսկովյան 1
ՀՎՀՀ 00243582
հ/հ 900011038701
Կենտրոնական գանձապետարան